62

...ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ ՄԾԱԿՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր, գեղանկարիչ *ԱՐԱՄ ԻՍԱԲԵԿՅԱՆԻ* հետ տարեվերջյան մեր հանդիպումը փորձ էր հստակեցնելու պատասխանատվության հայտնի սահմանները պետության կայացման, քաղաքական գործչի տեսակի և հասարակական պահանջատիրության տեսանկյունից:

«ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ, ՀԱՃԱԽ ԲԱՆԴԻՏԻԶՄՈՎ ՈՒՂԵԿՅՎՈՂ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՇՐՋԱՆԸ ՄԻ ՔԻՉ ԵՐԿԱՐԵՑ»

Ես շատերի նման շատ էի ոգևորված, լավատեսությամբ էի ապագային նայում և... երբեք չհեռացա Հայաստանից:

Իհարկե, անկախ և երջանիկ պետության ապագայի հետ կապված իմ ակնկալիքները չիրականացան: Ինչևէ, ես չհեռացա, տարա բոլոր դժվարությունները, ընտանիքիս և հորս հետ մաքառեցինք, և երբ խոսում են պատերազմի մասնակցության առնչությամբ, ասում եմ, որ երկրում ապրող և դիմակայող յուրաքանչյուրը պատերազմի մասնակից էր: Ժողովրդական նկարիչ էդուարդ Իսաբեկյանի, այսինքն՝ հորս հետ մի ցուրտ օր զրուցում էինք: Ի դեպ, առաջին անգամ նրան ընկճված տեսա: Հարցրի պատճառը, և ասաց. «Գիտես, և Երկրորդ համաշխարհային պատերազմ եմ տեսել և շատ ծանր, տագնապալի վիճակներ ապրել: Սակայն այն տարիներին եթե անգամ որոշ մարդիկ գաղտնի օգտվում էին ինչ-որ բանից, մենք չգիտեինք, անտեղյակ էինք: Իսկ հիմա անարդարությունը բացահայտ է, ու հենց դա է մարդուն ոչնչացնում: Ամեն բանի դիմանալ կարելի է, անարդարությանը՝ ո՛չ»:

«ԵՐԿՐՈՒՄ ԱՊՐՈՂ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅՈՂ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԷՐ»

-Տարիներ առաջ շարժումն էր և մեր ոգեշունչ նվիրումը շարժմանը: Հետո այդ ամենն ասես անհետացավ:

-Մենք հետո հասկացանք, որ այդ ամենն անխուսափելիորեն պիտի լիներ, որ խորհրդային իմպերիան քանդվեր, և պիտի անկախանային անգամ այն հանրապետությունները, որոնք նման ցանկություն էլ չունեին: Նրանք առանձնացան ստիպված, անկախ իրենց կամքից: Հետադարձ հայացքով շարժումը դիտարկելիս պարզ է դառնում, որ մենք կա կարող էինք ավելի սահուն անցնել մի համակարգից մյուսը: Անկասկած, մեր առջև դրված էր առանձնահատուկ մի խնդիր՝ Ղարաբաղը, որը լուծում էր պահանջում: Այսինքն, շարժումը սկիզբ առավ արդարության, հույսի և հավատի պոռթկումով: Իմ շրջապատում կային մարդիկ, որոնք խիստ թերահավատ էին և չընդունեցին շարժումը: Ոմանք էլ հեռացան և հեռվից տագնապով ասում էին՝ դեռ կտեսնեք ինչեր են կատարվելու: Ի դեպ, նրանք մշակույթի մարդիկ էին, նկարիչներ և ճարտարապետներ:

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՆ Է, ԵՐԲ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ»

-Անկախացումից և արդարությունից բացի, մենք ազատություն էինք տենչում: Ինչպիսի՞ն է ազատության խնդիրը մեր իրականությունում:

-Ազատությունը գործուն է, երբ ճիշտ, նպատակային ուղիով է ընթանում, երբ երկրում զարգացումներ են արձանագրվում, երբ «աշխատում են» օրենքները:

-Մեր օրենքներն անհասկանալիության աստիճան առաձգական են և... կամայական: Իշխանությունները զօրուգիշեր շեփորում են երկրի կայունացման քայլերդը: Կայունացումը, ինչ խոսք, որոշակիորեն առկա է, բայցևայնպես օրենքները կայունորեն շրջանցվում են:

-Աշխարհի յուրաքանչյուր պետությունում օրենքը երկսայրի սուր է. կարող է բարիք բերել և չարիք սերմանել: Ֆրանսիայում վկա եմ եղել, թե երկու-երեք ամիս շարունակ ինչպես էր ցնցվում հզոր ու քաղաքակիրթ այդ երկիրն ուսանողական հուզումներից և համընդհանուր գործադուլներից: Ու երբ խորհում ես, պարզվում է, որ հնարավոր էր խուսափել այդ ամենից, եթե օրենքները ճիշտ գործեին:

«ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆ-ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՔԱՐՄԱՑԱՎ, ԹԵ ԻՆՉՈՒ ՉԵՆՔ ԲՈՂՈՔՈՒՄ, ԻՆՉՈՒ ՓՈՂՈՑ ԴՈՒՐՍ ՉԵՆՔ ԳԱԼԻՍ»

-Մենք կարծես թե գենետիկորեն կրում ենք արդարության, ազատության և օրինապահության զգացումները: Սակայն ինչո՞ւ մեր բռունցքների վրա մարդկանց իշխանության բերելով՝ հետո հրապարակ դուրս չեկանք նրանց սխալները կանխելու և շտկելու մղումով: Հետո սկսեցինք բողոքել, հայհոյել ու ծաղրել:

-Մենք պետություն կառուցելու փորձ չունենք: Միաժամանակ մեր ժողովուրդն ունի համբերելու մի զարմանալի հատկություն: Գուցե և այդ՝ երբեմն անընդունելի համբերությունն է նեցուկ եղել մեզ գոյատևելու այս տարածաշրջանում: Եվ պետություն վերականգնելու: Մի անգամ այս հարցը ծագեց Լուիզ Սիմոն-Մանուկյանի մեջ, և նա ասաց՝ զարմանում եմ, ժողովուրդն ինչո՞ւ չի բողոքում, ինչո՞ւ փողոց չի դուրս գալիս: Հավանաբար տարածաշրջանային վտանգվածությունն է պատնեշում ժողովրդի ցասմանը: Եվ հույսը, որ այս ամենը մի օր շտկվելու է: Գուցե սա անվանենք ինքնապահպանական բնազդ:

-Գուցե: Սակայն երբ փլուզվում էր մեր տնտեսությունը, և մենք անտարբեր լռում էինք, սա՞ էլ է ինքնապահպանություն:

-Հանդգնած չեմ, որ առաջին նախագահը բավականաչափ գիտակ էր տնտեսական հարցերում, և բավականաչափ իրազեկ էին նրա խորհրդատուները: Սակայն, ի վերջո, մարդը կշտանում է, և նա, նրա ընտանիքն ու շրջապատը մի օր հասկանում են, որ ժամանակն է այլ, ոչ այնքան նյութական արժեքների հետևել: Աշխարհի անգամ ամենահարուստ երկրներն անցել են այս ամենով: Մենք էլ կանցնենք: Պարզապես նախնական կապիտալի, հաճախ բանդիտիզմով ուղեկցվող կուտակման շրջանը մի քիչ երկարեց: Սակայն դա էլ իր վերջն ունի: Այս հարցում մենք, իհարկե, մի փոքր անհամբեր ենք, և դա արդարացված է:

-Անցած «հաշվետու ժամանակաշրջանում» քաղաքական շատ գործիչների ռեսուրսները սպառվեցին: Եվ սպառվեցին վերջնականապես: Ինչո՞ւ:

-Ցավոք, շատերի մոտ քաղաքականությունը բիզնես-նախագիծ էր, որը հաջողություն ունեցավ որոշակի փուլում: Դա ապրելածև է ոմանց համար, ընտանիքը կերակրելու միջոց: Եվ այստեղ էլ կան ավել կամ պակաս չափով օժտված մարդիկ... ինչպես արվեստում: Եվ այստեղ հաճախ տոն են տալիս միջակությունները, քանզի հրապարակում չունեինք, օրինակ, Չերչիլի նման մեկը:

«ԵԹԵ ՄԱՐԴՆ ԻՐ ԳՈՐԾՈՎ ՉԻ ՋԲԱՂՎՈՒՄ, ԱՍՏՎԱԾ ՊԱՏԺՈՒՄ Է»

-Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն պետք է լինի 3-րդ նախագահը:

-Չափազանց կարևոր է, որ նոր նախագահը լինի լեգիտիմ, ընտրված ժողովրդի կողմից և հենվող ժողովրդին: Եվ բոլոր նրանք, ովքեր դա խաթարում են, Հայաստանի թշնամիներն են: Հնարավոր է, որ ես վերապահումներ ունենամ այս կամ այն թեկնածուի հարցում: Սակայն, կրկնում եմ, չափազանց կարևոր է արդար ընտրությունը և վտանգավոր՝ քաղաքական վայրահաչությունը, թե անպատճառ ընտրությունները կեղծվելու են, նախագահը լեգիտիմ չի լինելու: Հայաստանում վաղօրոք կեղծ ընտրությունների անխուսափելիության քարոզները շատ մեծ վնաս են պատճառում երկրի հեղինակությանը, խարխլում երկիրը:

-Մեր խորագիրն ունի իր ավանդական վերջնահարցը: Ինչո՞վ եք զբաղված:

-Ցավոք, 2007-ն այնքան էլ բարեհաջող չէր: Շատ կարևոր մարդկանց կորցրինք, և հոգեկան վիճակս չէր նպաստում ստեղծագործական կյանքի: Սակայն շարունակվում է իմ ամենօրյա գործունեությունը գեղարվեստի ակադեմիայում, ես նկարիչ եմ և շարունակելու եմ նկարել: Սա է ինձ համար նախասահմանված: Հաճախ եմ հիշում հորս խրատը՝ եթե մարդն իր գործով չի զբաղվում, Աստված պատժում է:

Ինչևէ, օգտվելով առիթից, շնորհավորում եմ «Իրավունքի» աշխատակիցների և ընթերցողների գալիք Ամանորն ու Սուրբ ծնունդը: Ես սիրում եմ այս թերթը և Հրանտ Խաչատրյանին էլ համարում եմ Հայաստանի համար կարևոր մարդ ու քաղաքական գործիչ:

Հարցազրույցը՝ ՎՐԵԺ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ